*Առ Հռչակաւորոյ և գերապատուելոյ տեառն Մխիթար վարդապետի և Վանապետի Անդրադարձականն սիրոյ և հաղորդակցութեան եկեալ ճօնեացի ողջոյն*

Առաքինասէր վարդապետութիւն և բարեկրօն Վանապետութիւն քո, թէպէտ ի տեսութենէ զգայականի ոչ էր ինձ երբէք պատկեր առ պատկեր ծանօթացեալ, թէև կարօտիւ ախորժականաւ ի Վաղուց հետէ ականատես նորա լինիլ, և ընդ նովիմբ հոգևորապէս խրախճանալ մերթ առ մերթ փափաքիցէի, սակայն ի համբաւունակ հռչակմանէ ի ձեբայնոց վարուց բարեկրօնից, ի պտղոց քոց վաղահասից ի վերայ անդիտապատոյտ արմատոյն առաքինութեան և գիտութեան պատուաստեցելոց, ի յաշխատանաց քոց յարատևեցելոց, որք ի ուղղութիւն նկրտին ազգին մերոյ, ի հոգեշահից գրեանցն Ալպերթի ի քէն մեծաւ ջանիւ կերպաւորեցելոց, նոյն ինքն լեալ էր ինձ արդէն իսկ յայտնի, և մանաւանդ ի քաղցրաբարբառոյ տրամաբանութենէ ներկայականիս, զոր ի չորեքտասան ընթացելոյն ձեռնամուխ լեալ ժառանգեցի, նորում Վաղնջականի բարեկամութեան, անստգտանելի Վարդապետութեան, անբամբասելի մեծաւորութեան, ամբասիրի Վերակացութեան, և սիրալրականի Վանապետութեան քո, և բնաւից քոյոց կրկնակաբար եղէ վերահասու։ Ուստի թողլով զարտաքին արարողութիւնն, վանապետական գերապատուելութիւն քո, զոր ի ներքնայնոյ համբարանէ սրտի իմոյ սիրեալ էի, և նոյնոյ իւրայնօքն հանդերձ իսկոյն սիրահարեալ սիրահարիմ, իրազեկ լեալ, խելամուտ լիցի հաւաստեաւ, զի զոր ինչ լուեալ է՝ զինէն, այն ամենայն ճանաչի եկեալ ի բազմազեղից չնորհացն ոգւոյն սրբոյ, որ ըստ հաղորդակցականի բարութեան իւրոյ ուր կամի աննախանձ չնչէ, և բաշխէ առատապէս զգանձս անհոսելի իմաստութեան անձանձրիւ երկայնմտութեամբ հայցողաց։ Վասն որոյ այն ամենայն եկեալ ի պարգևաց ոգւոյն սրբոյ ի պատիւ երանեցելոյ կուսին ի վայելչութիւն վեհաբարձրութեանց սրբոյ ժողովին, և ի համբաւ արամեան ազգին առընչացաւ, մինչ զի ածմոյս ձեր սիրելութեան այլ ոչինչ մնաց, եթէ ոչ ես իմովս բոլորովիմբ. որ թէպէտ ի մեծէն հռմայ այդր գալ կամ եղև ինձ ախորժանօք և բազմիցս և ընդ ձեօք հաղորդակցիլ բանիւ Տեառն, և զանդրադարձական կարօտութեան փափաքն համաբաստանալ, սակայն, կամք տեառն օրհնեալ եղիցի, վասն բազմից պատճառաց և մանաւանդ վասն ծանտրութեան բեռին իմոյ, որոյ խարճն շատ էր և պատշաճաւորի նաւին, որոյ այդր գտանելն աներկբայ ոչ լինէր, հարկ եղև հրամանաւ մեծաւորաց աստի անցանել. բայց աստ ևս մինչև ցայս վայր արգիլեալ մնացի, զվաղճան սորա տեսցուք ի բարին։ Զբազում զեկուցումն կարէի գերապատուելութեան քո աստի ծանուցանել, բայց գիտեմ, որ յեղբօրէն մերմէ թէ ոչ է տեղեկացեալ, կարող է մտերիմ լինիլ, զի ես նմա, ասեմ Խաչատուր Աստուածաբանութեան Վարդապետին մի ըստ միոջէ ծանուցեալ եմ։ Տէր Էմանուէլն աստ եկեալ էհաս, որ է՝ բազմաժամանակեայ բարեկամ և առաջին խոստովանահայր իմ, և ինձ յոյժ սիրելի, սակայն, աւաղ խառնակ ժամանակիս, ոչ կարեմ նմա ըստ ըղձանաց իմոց ձեռնտու լինիլ, բայց հոգևորապէս ոչ պակասիմ ըստ կարեաց իմոց մինչև անցէ բարկութիւն Տեառն. ես ամենևին ձեր եմ։ Մեծաւ սիրով ողջոյն ընձեռեմ բնաւից միաբանութեան քո եղբարց ճանաչողաց, և զիս անճանաչողաց և մանաւանդ քաղաքակցաց իմոց։ Դարձեալ որդիականաւ սիրով և կարօտիւ զբազմազան ողջոյն մատուցանեմ գերապայծառութեան Հօր իմոյ Արութիւն Եպիսկոպոսին։ Այդ հայցեալ ի Ցիսուսէն իմմէ Վանապետականի Վերապատուելութեան քո զամենայն առողջութիւն և խոհեմական արիութիւն, և յանձն արարեալ զիս բարեկրօնից աղօթից և սրբազանից պատարագաց քոց, և քոյոցն ըրկախառն համբուրիւ մնամ պարաւանտեալ ամենայնի.

Վանապետականի գերապատուելութեան քո

Անպիտան ծառայ Բարդուղիմէոս
Վարդապետ յերկրէն Եւդոկիոյ անարժան
Նուիրակ Առաքելական

Ի Ալիկոնա թուին Փրկչին
1717 յոկտեմբերի 15 ի տան
պարոն ուռուստամի